ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-ից 29-ը ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

Օրի Ալավերդյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության պետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա), 26.11.2019-29.11.2019թ.

4. **Հրավիրող կողմը.**

Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Գործուղման նպատակը «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու և Եվրասիական տնտեսական միությունում ապրանքների և ծառայությունների էլեկտրոնային առևտրի հարկման հետ կապված, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներ ապրանքների արտահանման մասին տեղեկացնելու հարցերի կարգավորման նպատակով կայանալիք խորհրդակցությանը մասնակցությունն էր: Քննարկման առարկա հանդիսացող հարցերի շուրջ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված դիրքորոշման և դրա վերաբերյալ մյուս անդամ պետությունների մասնագետների դիրքորոշումների անհամապատասխանության պատճառով անհրաժեշտություն էր առաջացել հարցը կրկին անգամ քննարկել Մոսկվայում կայանալիք քննարկումների ընթացքում:

6. **Քննարկված թեմաները.**

Խորհրդակցությունների ընթացքում քննարկվել են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու և Եվրասիական տնտեսական միությունում ապրանքների և ծառայությունների էլեկտրոնային առևտրի

հարկման, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներ ապրանքների արտահանման մասին տեղեկացնելու հետ կապված հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Տեղի են ունեցել քննարկումներ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության համապատասխան իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Քննարկումների արդյունքում հաջողվել է համաձայնություն ձեռք բերել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բարձրացված խնդիրների կարգավորման շուրջ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Քննարկման ընթացքում արձանագրված արդյունքն այն է, որ մի շարք հարցերի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված դիրքորոշումը ընդհանուր առմամբ ընդունելի է համարվել և պայմանավորվածություն է ձեռք բերվել նախագծով կարգավորել մեր կողմից բարձրացված խնդիրները ու շարունակել նախագծի հետագա լրամշակման աշխատանքները:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Recoverable Signature

X

ՕՐԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Signed by: ALAVERDYAN ORI 3903850632